ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունիսի 2017 թվականի N 136-Ա

1990-1999 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 669-Ն որոշման 7-րդ կետի դրույթների՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Նահապետյանին՝ անցկացնել Հայաստանի Հանրապետության արական սեռի այն քաղաքացիների պարտադիր զինվորական և այլընտրանքային ծառայությունների ամառային զորակոչը, որոնց 18 տարին լրանում է մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնց նախկինում տրված՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքը դադարել է մինչև 2017 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

2. Ստեղծել զորակոչային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Նահապետյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ,

2) Կ. Մանուկյան անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ,

3) Գ. Հայրապետյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

4) Վ. Սարգսյան անդամ, ավագ բժիշկ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության թերապևտ:

3. Հաստատել զորակոչիկների բժշկական քննություն անցկացնելու հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Վ. Սարգսյան թերապևտ, ավագ բժիշկ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

2) Ռ. Մկրտչյան վիրաբույժ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

3) Ա. Ավետիսյան ակնաբույժ «Ջուվոնու առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

4) Դ. Ղամբարյան բիթ-կոկորդ-ականջ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

5) Հ Կարապետյան նյարդաբան «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

6) Լ. Հովհաննիսյան սրտաբան «Բյուրեղավանի բաղաքային պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերություն,

7) Ա. Մանուկյան հոգեբույժ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

8) Ա. Կատավարիչյան մաշկավենեբաբան «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն,

9) Ս. Օհանջանյան բուժքույր «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն:

4. Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան և նյութական պայմանների ստուգման և բննման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Ա. Կողարաշյան նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետ, մայոր,

2) Գ. Հայրապետյան անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) Համայնքի ղեկավար ըստ բնակավայրի:

5. Բժշկական բննություններ անցկացնող հանձնաժողովի անդամների վարձատրությունը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 483-Ն որոշման պահանջների համաձայն:

6. Մարզի բժշկական կենտրոններում զորակոչային տարիքի անձանց բժշկական բննություններն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 10-ի N 748-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն:

7. «Նաիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Նազարյանին՝

1) Ժամանակին կազմակերպել այն պատանիների հետազոտումը և բուժումը, որոնք հանձնաժողովի կողմից ուղարկվել են հետազոտման կամ բուժման,

2) բժշկական հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ զույգով, սարքավորումներով և դեղորայքով:

8. Առաջարկել համայնքների ղեկավարներին, հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրիններին՝ համաձայն զինվորական կոմիսարիատի կողմից զորակոչիկներին հավաքակայան ներկայացնելու գրաֆիկի և անհատական ծանուցագրերի, ապահովել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինվորական կոմիսարիատ:

9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Նահապետյանին՝ զինվորական կոմիսարիատի սպասարկման տարածքում գտնվող ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին ներգրավել, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, զորակոչիկների փոխադրումներն իրականացնելու համար:

10. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Կ. Մանուկյանին՝ զորակոչային տեղամասերում ապահովել հասարակական կարգի պահպանությունը և կազմակերպել զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումները ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս:

11. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 3-րդ սպայական վաշտի հրամանատար, ոստիկանության մայոր Ա. Պետրոսյանին՝ ապահովել զորակոչիկների անվտանգ փոխադրումը զորակոչային տեղամասերից հանրապետական հավաքակայան:

12. Սույն որոշման կազմակերպումը և կատարումը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրիի զինվորական կոմիսար, փոխգնդապետ Ա. Նահապետյանի վրա:

13. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Հ. Հայրապետյանի* վրա:

14. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հունիսի 29
ք. Հրազդան